է «Շատ հետաքրքրական է քննել՝ թէ ինչ ծագում ունին այս նշանագրերը, որ Հայկական մոքի առաջին և հնագոյն արգասիքը կը համարուին։ Եսսէնի քննութեամբ Հաթեան արձանագրութեան ամենահինը Ք՛ուէ 1000—տարի առաջ կերևի.... Այս մտածութեամբ պէտք էր կարծել, որ Հաթեան նշանագրութիւնը հնարուած ըլլայ Ք՛ուէ 1200 տարի առաջ։»

Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեան

Աղլի դաշի սեպաձեւ արձանագրութիւն

Կատարելով մեր խնդիրը Սըթհանցի Գ. Կիրակոս Տէր Աղէքսանդրեանը մայիսի 30-ին գնացել է Դալի—բաբա և այնտեղից՝ Եաղըլի—դաշ քրդաբնակ գիւղը, որ Էրզրումի վիլայէթի Սերին—Բասենի Դալի—բաբայի մուդիրութեան մէջ է, տեղւոյն տանուտէր, համիդիէի Բին-բաշի Հաջի—Ալի էֆէնդին սիրով ընդունել է պարոնին։ Գ. Կիրակոս Տէր Աղէքսանդրեանը գրում է, որ արձանագրութիւնը գըտնւում է գիւղից կէս վերստ հեռու լեռան լանջին արևելակողմը և հեռուից նայողի վերայ մեծ պատուհանի տպաւորութիւն է թողնում։ Բարձր է գետնի երեսից 4 արշնաչափ։ Արձանաքարը $2\ ^{5}/_{4}$ արշ. լայնութիւն արևելքից արևմուտք և ունի $2\ ^{3}/_{4}$ արշ. երկայնութիւն վերևից ներքև. կարմրագոյն կարծր տաշած քարը կէս արշին խորութեամբ փորուած ու յղկուած է և ապա խիտ առ խիտ քանդակուած են սեպագրերը։ Մի քանի տեղեր հրացանի գնտակով վնասուած տեղեր կան, որ նոր ժամանակի գործ է, իսկ մի տեղ էլ թնդանօթով են փչացել 1877—1878 թ. Ռուս տաճկական պատերազմի ժամանակ։ Գ. Տէր Աղէքսանդրեանը երբ պատրաստուել է ընդօրինակել արձանագրութիւնը, տանուտէր Հաջի—Ալի էֆէնդին թոյլ չէ տուել, պատճառելով որ նա հրաման չունի։ Միւդիր Նէջէտ էֆէնդին էլ չէ թոյլ տուել, առարկելով, որ կարսի կոնսուլի միջոցով պէտք է Էրզրումի վալիի թոյլտուութիւնը խնդրուի։

Տեղական իշխանութիւնների արգելքը ընդօրինակելու արձանագրութիւնը հեռևանք է թիւրիմացութեան։ Ամեն ոք ազատ է իւր տեսածը կարդալ և արտագրել. ջոկ բան է պեղումն, որի համար հարկաւոր է պատշաճ թոյլտուութիւն։

Պ. Տ. Ալէքսանդրեանը ցաւելով յայտնում է, որ չէ կարողացել արձանագրութեան տողերն ու գնտակով փչացած տեղերը համարել։

Սակայն յաջողել է ափ ափոյ մի քանի տառ արտագրել, որ և տպագրում ենք Արարատի մէջ։

Յուսիկ Արհեպիսկոպոս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Խնդրում եմ «Արարատի» խմբագրութեան գրութեանս տեղ տալ թերթի յունիսի համարում։

«Արարատի» այս տարուայ մայիսի համարում պ. Կանայեանը իր «Նամակ խմբագրութեան» գլխումի մէջ գրում է. «. . . . . բաւական չէ միայն վերատուգութիւնը, որի համար ես հէնց տարուայ սկզբից քանիցս խնդրեցի Ռոստոմեանից, և որ տակաւին տեղի չունեցաւ . . . .»։

Չեմ յիշում, որ պ. Կանայեանը երբ և իցէ ինձնից այդպիսի բան լինի խնդրած. յամենայն դէպս մինչև ճեմարանի տարեկան հանդէսը ու զեկուցումս Վեհափառ Հայրապետին ներկայացնելը չէր կարող խնդրել։ Յիշում եմ միայն, որ պ. Կանայեանը, որը այժմ երեք տարի է, ինչ գրադարանապետ է, մի քանի անգամ ինձ ասել է. «Ինքս մատենադարանը ընդունել եմ ներկայ խառնակ դրութեան մէջ»։ Ստուգումը, թէև ոչ լրիւ, արդէն կայացել է։ Ուս. պ. Խոստիկեանը և վեր. պ. Ասլանեանը, որոնց յանձնուած էր այդ, արդէն ստուգել են 8595 գիրք, պարզել են 459 գրքի կորուստ և 2662 գրքի համարի տակ չլինելը։ Կազմուած է և ներկայացրուած է Վեհափառ Հայրապետին երկու արձանագրութիւն, որոնցից մէկը՝ կազմած 15-ին յունուարի, մի քանի անգամ եղել է պ. Կանայեանի ձեռին։ Պ. Կանայեանը, իբրև մատենադարանապետ պէտք է որ նկատած լինէր պ. Ասլանեանին և պ. Խոստիկեանին, որոնք աշխատում էին մատենադարանում։

Մ. Ռոստոմեան.

11-ին յունիսի 1910 թ.
Էջմիածին։